

ԲԱՐԵՎԵՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂԱԽԹԻՒՆԵՐ

ՀԱՅ Դ Ա Մ Ս Ո Ր Ե Շ Յ Թ Ե Ր Ի Թ Ի Ւ Ն Ե Ր
ՏՈՒՄ Ֆ Ա Ն Խ Մ Բ Ը Ը Գ Ր Ո Ւ Թ Ե Ր Ե Ր

Բարի եղէք, եթէ յարմար տեսնէք,
այս զիտողութիւնները լոյս ընծայելու ջեր
թերթի մէջ։ Առաջին երկու դիտո-
ղութիւններս գուցէ զարմանք շարժեն իրը¹
նորութիւն։ առաջինը ենթադրական իրոյք
և եկոյք ձեւերի պատճառով, իսկ եր-
կրորդը՝ ոք-ը ո-ի յոզնակին և իք-ը ի-ի
յոզնակին համարելուս պատճառով։ Նկա-
տեցէք սակայն, որ իմ հիմունքներն առ-
նուած են մեր իսկ լեզուի երեսոյթներից։
ոյք, ոյց, ոյց իր տեսակի մէջ միակն է,
բայց կայ. աս ենթադրութիւն չէ։ Գալով
ոք-ին և իք-ին՝ պիտի խնդրէի, որ թոյլ
առայիք այդ կարծիքս հրապարակուի։ Ես
պատրաստում եմ մի քանի աշխատանքներ
մեր լեզուի մասին, որոնցից մէկը վերա-
բերում է մեր դերանուններին։ Այնտեղ ես
առիթ կունենամ աւելի երկար կանգ առնե-
լու ոք-ի և իք-ի վրայ։

Դուք իմ յօդուածը լոյս ընծայեցէք
երբ «կարծիք», թոյլէք որ ուրիշները զի-
տողութիւն անեն, այն ժամանակ յօւսով
եմ, որ պարզերես գուրս զամ։

Իմ զրադարանը մնաց երեւան։ այս-
տեղ ամէն զիրք գտնել կարելի չէ։ այս հան-
դամանքը շատ է խանդարում աշխատանք
արար առաջ տանելու։

Յուսով եմ սակայն Զատկից յետոյ
ուղարկել ձեզ իմ «զիտողութիւնները հայոց
լեզուի մասին», որ շատ աւելի զարմանք
պիտի աղքեն քան եկոյքն ու իրոյքը կամ
ոքն ու իքը։

Աղեքսամոյիս, 27 Փետր. 1926։

Ն. Ա.

Ա.

ԶԵԿՈՅՑ ԵՒ ԶԵՅ

Զեկոյց բառը չկայ Առձենն բառա-
րանում։ Ա. Գրքի մէջ մի անգամ զործա-
ծուած է զեկոյցանեմ բայց իրը կատ. եզ. 3.

դէմք. «Փեսոսս զեկոյց Արքայի դՊաւ-
զոսէ», Գործք, իԵ, 14, որ նշանակում է
տեղեկութիւն տալ։ Բայց պարզ է կարծեմ,
որ այս բայց կազմուած է զեկոյց բունից
իրը զեկոյց-ան-ել։

Զրոյց բառը 16 անդամ զործածուած
է Ա. Գրքի մէջ եւ մեծ մասամբ նշանակում
է լուր, տեղեկութիւն։ «Զրոյցս տալ» (Բ.
Մակ. Գ. 379 եւ «Պրոյց բերել» (Ծն. Ա, 14)
նշանակում են լուր տալ, տեղեկութիւն
բերել։

Կարծում եմ այս երկու բառերը,
որոնց նման ուրիշ բառեր չկան մեր բառզրել
մէջ, քարացած պատմական հոլովներ են իր
և եկ բառերի։

Ահաւասիկ կարծիքիս հիմունքները։

1. Ինչպէս ուրիշ լեզուների, այնպէս
էլ մեր լեզուի մէջ շատ բառեր կան, որ քա-
էլ բառ լեզուի մէջ շատ բառեր կան, որ քա-
րացած հոլովներ են։ Այսպէս օր. իրաւ եւ
իրօք, որ իր բառի եզ. եւ յոզն. գործիական
հոլովներն են։ ներս, որ ներ բառի յոզն.
հայցականն է. սրա ուղղականն անշուշտ
եկած է ներք, որից ներք-են։ Անհնարին չէ
ուրեմն, որ ունենանք նաև քարացած պատ-
մական հոլովներ։

2. Գրաբարի մէջ կան բառեր, որ
կրկնակ ձեւով յոզնակի ունին. ինչպէս օր.
զանիք եւ զանյիք, պէտք եւ պիտոյք, ամօք եւ
աւարօռոյք։ Անհնարին չէ ուրեմն, որ եկ
եւ իր բառերը նոյնպէս ունեցած լինին
կրկնակի ձեւով յոզնակիներ. եկիք եւ
եկոյք, իրք եւ իրոյք։

3. Ոյք վերջացող բառերը սովորա-
բար թեք հոլովները կազմում են այսպէս.
պիտոյք, զանյիք։ Բայց ունենք ո գե-
րանունը, որ իր յոզնակի թեք հոլովները
կազմում է, կարծում ենք՝ հնագոյն ձեւով.
ոյք, զոյս, ոյց եւ պատմականը՝ զոյց։ Ան-
հնարին չէ, որ եկ եւ իր բառերը հին ժա-
մանակ այսպէս հոլովուած լինին, որով
կ'ունենանք՝ եկոյք, եկոյց եւ պատմականը՝
զեկոյց. իրոյք, իրոյց եւ պատմականը՝ զե-
րոյց, որի ի-ն աղելով՝ զարմած է զըրոյց
(այդպէս էլ արտասանում ենք), որ է —
զոյց։

1. Հ. Ա. Յանը հանդիպած է իր բառի սեռա-
կանին երբ իրոյց (ունի քնն. Քերակ. Բ. էջ 17), այդ ինչ-
պէս կայ պէտք, պիտոյք, պիտոյք, կարող եր լինել իր.
իրոյց, իրոյք։

Երբ Յակոբը Յովսէփին ուղարկում է եղայների մօտ եւ ասում է. դնա՛, տես ո՞չ են եղայրներդ ու խաշնքը եւ «բեր ինձ զրոյց», պարզ է զրոյց բառի իմաստը, որ է՝ տեղեկութիւն, լուր՝ իրերի կացութեան մասին, մի լուր՝ իրերի մասին, «իրոյքի» մասին: «Զրոյցս տալ» նշանակում է ուրեմն իրերի մասին լուր, տեղեկութիւն տալ: Զրոյց-ի բուն իմաստից ծագում է եւ այդ բառի միւս առումը, որ նշանակում է պատմութիւն, ինչ որ ուրիշ բան չէ, քան տեղեկութիւն իրերի մասին:

Ինչպէս տեսանք եկ բառի ենթադրական երկրորդ յոդնակին համարում եմ եկոյք: Եկ բառը 42 անդամ գործածուած է Ս. Գրքի մէջ եւ միշտ նոյն իմաստով. Եկ նշանակում է եկուոր, ոչ բնիկ: «Օրէն ժիեւոյն կացցէ բնակին եւ եկին» (Ելք. ԺԲ. 49). «յեկաց եւ ի բնակաց երկրին» (Ելք. ԺԲ. 19). Եւ այն: Այս իմաստով եկը ցեղական կենցաղի մի իրաւական տերժին է եւ նշանակում է այն անտոհմիկ օտարականը, որ եկած, յարած է ցեղին եւ ապրում է նրա մէջ: Բայց եկ բառի նախնական նշանակութիւնն անշուշտ եղած է պարզապէս եկուոր, լինի այդ եկուորը արդէն եկած ու հաստատուած բարեկամ մարդ, թէ հեռուից մօտեցող, ցեղի վրայ եկող թշնամի: «Զեկոյց» ուրեմն նշանակում է լուր, տեղեկութիւն «Եկոյք» ի այսինքն եկոզների, եկուորների մասին՝ լինեն արդէն եկած թէ նոր եկող, իսկ «զեկոյցանեմ», նախապէս պէտք է որ նշանակէր տեղեկութիւն կամ լուր տալ եկածների կամ եկոզների մասին:

Այսպիսով թէ՛ զեկոյցը եւ թէ՛ զրոյցը երկուսն էլ հին կենցաղի բառեր են եւ նշանակում են լուր եւ տեղեկութիւն. մէկը՝ օտարականների մասին, լինին նրանք արդէն եկած թէ նոր եկող, իսկ միւսը իրերի, կացութեան մասին: Երկուսն էլ քարացած պատմական հոլովներ են՝ մոռցուած յոդնակի ձեւերից:

Ժամանակի ընթացքին խամբած է այդ բառերի ներքին իմաստը, ինչպէս նաև նրանց յոդնակի ձեւը: Մինչեւ իսկ դասական ըջանում այդ բառերը մտածուած են իրը պարզ եղակիներ: Դրանցից մէկը ստացած է նոր յոդնակի կազմութիւն՝ զրոյցի, զրուցաց, իսկ միւսը կամ շատ քիչ է գործ

ածուել, կամ բոլորովին դուրս է մղուել: Յամենայն գէպս չի մնացել զբականութեան մէջ իրը պարզ բառ: Եւ այդ պատահէլ է ճիշտ այն ձեւով, ինչպէս այսօր մենք բարեւ եւ կամք բառերը չենք մտածում իրը գործիական հոլով եւ յոդնակի թիւ, ուստի նոր կազմութիւն տալով նրանց ասում ենք՝ բարեւով, կամքեր:

Բ.

Օ՛ՔՄԻԿՆ ԵՒ Ի՛Մ ՔԻԿՆ

Գ. Սունդուկեանի «Պէպօ»ի մէջ (1920 թ. Թիֆլիս, էջ 60) կարդում ենք Արութինի կոնջ ասածն իր մարդուն. «Աղջիկը քի պէս մարթ ունենայ ու նրա աճկումն էլի օֆիին գուրքայ աշխարքումը»: Պէպօի մայրը Գիքօխն ասում է (էջ 4): — Հրա՛, իմֆին խարար կա՛յ: Մի ուրիշ տեղ Գիքօն ձուկը ձեռին ասում է: — ի՞նչ զիամաթ իմքին է՛ (էջ. 38):

Բերած օրինակների մէջ, ինչպէս եւ ուրիշ տեղեր, օ՛ֆիին նշանակում է որ եւ է մարդ, ոմն, ոք. իսկ իմֆին — որ եւ է բան, իմն, ինչ: Թիֆլիսի Հաւլարար թաղում չեն ասում իմֆին, այլ — իմֆին. Եւ ընդհակառակն փոխանակ ասելու օ՛ֆիին, ասում են օմֆին: Օմֆին եւ իմֆին ձեւերը հնչիւնների պարզ տեղափոխութիւն են. ինչպէս՝ դգալ, գդալ բառերում: Ուղիղ ձեւն անշուշտ օմֆին է եւ իմֆին: Ինչպէս գրելով ով կարդում ենք օվ, այնպէս էլ ասում ենք օմֆին, բայց իսկապէս ոմֆին է:

Այս բառերի կազմութիւնը պարզ է: — ոմֆին եւ իմֆին: Մէկը կազմուած է հին ով զերանունից, իսկ միւսը՝ իվ զերանունից: Երկուսն էլ մեր կարծիքով յոդնակի ուղղական են. մէկը ո զերանուածն, միւսը՝ ի զերանուածն: Մի քանի զաւառներում, օրինակ՝ Ախալքալաք, իվ ձեւի փոխարէն գործ են ածում իրք. այնուզ, ուր Արարատեան դաշտի գիւղացին ասում է էնիֆը, այսինքն է բանը, Ախալքալաքին ասում է՝ իրքը, որ իր բառի յոդնակի ուղղականն է, իսկ իրը ի զերանուածն եղ. սեռականն է: Ոք եւ իվ գեռ հին ժամանակ մտածուած են իրը եղակի, իսկ իրը իրը ուղղական, ինչպէս մերը եւ իմը, որ իրը ուղղական մտածուելով (թէ եւ սեռական են)

հոլովակում են. մեր մերոյ, մերի, մերոց և
իմ, իմոյ, իմք, իմոց:

Այսպէս ուրեմն զբարարի ոմն եւ իմն
զերանուներին զուգահեռ՝ թիֆլիսի բար-
բառն ունի ոք-մին եւ իք-մին: Առաջին
զոյզը կաղմուած է ո եւ ի զերանուներից
ո՞ւման եւ ի՞ւման ձեւով, որ յարաշետ մի-
նելով՝ սղած են ա-երը, իսկ երկորդ
զոյզը նոյն զերանուների յոզնակի ուղղա-
կանից. իւ իք-իք-մին, ո- ոք- ոք-մին:

Զուղահեռ կաղմութեան հետ՝ այս
երկու զոյզն ունին եւ զուղահեռ նշանակու-
թիւն, այսինքն՝ ինչ որ բան, ինչ որ մարդ:

Գրաբարի ոմն եւ իմն բառերի ծա-
ծուկ վանկերը — մն — մարդ կարող է
փորձուել համարելու մին, որով կաղմուած
են թիֆլիսի բարբառի օքմին եւ իքմին դե-
րանուները: Բայց այս բառերի մինը-ը
պարզապէս նշանակում է մի, մէկ եւ ոքմին
նշանակում է մի ոք, իսկ իքմին — մի իք,
մի զատ, մի բան: Ոմն եւ իմն բառերի մն
ծածուկ վանկերը իրենց ձայնաւորը սղած
մաներ են, որ իրենց լրութեամբ երեւում
են յոզնակի ուղղականի եւ թեք հոլովների
մէջ, դառնալով ոմանք, ոմանց: Գալով
իմն բառին՝ նա չունի յոզնակի թիւ եւ թեք
հոլովներ, բայց բարդութեանց մէջ նա եւս
երեւան է բերում իր սղած ան. այսպէս
միջի՞մն, մրջման, մրջմանց, որ առաջ են
դալիս մուրջիման, մուրջիմանց նախա-
ձեւերից, սղելով շեշտից առաջ եղած
ձայնաւորները — մ(ու)րջ(ի)ման, մ(ու)ր-
ջ(ի)մանց: Համ. պարսկ. այս եւ իր
նուղականը — հայոց:

Ն. Աղբալեան



ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԱԿԱԶԱՆ

(Եշտարհազրական և պատմական նետազառու-
թիւններ)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

(Շայտումականիւններ)

Արեւելքում ամենանախնական շրջան-
ներից սկսեալ ջրբաժան գիծն էր ցեղերի եւ
տոհմերի կալուածների բաժանաբար սահ-
մանը: Մինչեւ օրս Օմաննեան իշխանու-
թեան եւ Պարսկաստանի երկիրներում ջրբա-
ժան գիծն է կաղմում կալուածների սահ-
մանները: Մի որեւէ առուի մէջ շրջապա-
տից հոսած եւ այդ առուն թափուած բոլոր
ջրերը նոյն սահմանի մէջ եղած բոլոր հո-
գերի հետ մի ամբողջութիւն է կաղմում: Արեւելքում ուածկի բարբառում քարացած է
«ախալ-բախարի» միտքը, դա անփոխ-
խելի եւ անայլայլելի էր: Հետեւելով այս
պատմական աւանդութեան, ձորոխի Աւա-
զանը մենք էլ բաժանելու ենք ջրբաժան
զծով. ո՛չ թէ բոնակալ տիրող-յափշտակող-
ների քմահաճոյքով կամ որի ճնշման տակ:
Ձորոխի Աւազանը Հայոց աշխարհին
մօտ միացած սահմանները աւելի նման է
մեր երկիրն եւ որքան խորն էք մտնում,
թափանցում էք այս երկիրի խորքերը եւ ա-
ւելի Մեւ ծովին մօտ՝ այնքան կերպարանա-
փոխում է: Այրարատեան նահանգից,
Վանանդից-Բասենից Բարձր Հայք պատրի
կատարելուց յետոյ, երբ ճանապարհորդը
կարնոյ սաղից (զաշաշամբ) ուղղւում է
գէպի հիւսիս-արեւելք, անցնում է Թուրի,
Թափթի, Կարագորէկի ամրոցները (Թա-
րիա), Թրատ (Եփրատ) գետի հովտով
դումլու լեռների լանջերով, հասնում է
Զինագորի հովիտը-Թորթումի գաւառում,
այնպէս է փոխուում օդը, բոյլը, շրջապատի
բուսականութիւնը, որ անցորդը զգում է
կենցաղի փոփոխութիւնը: Ոչ միայն բու-
սականութիւնը, այլ նոյն իսկ կենցանիները
իրենց գոյնով, հասակով, կայտառ շար-
ժումներով նորանոր տեսարաններ են կաղ-